ԹԵՄԱ 1 ԵՎՐՈՊԱ

ԴԱՍ 1.3. Արևելյան Եվրոպա: Բնական պայմանները և ռեսուրսները: Բնակչությունը

• • •

Երկրների մեծ մասը Եվրամիության անդամ են: Նախկինում (1940–1990-ական թթ.) սոցիալիստական ճամբարում գտնվող երկրները, բացառությամբ Ուկրաինայի, Բելառուսի և Մոլդովայի, այժմ դարձել են Հյուսիսատլանտյան դաշինքի՝ ՆԱՏՕ-ի անդամ: Ուկրաինան և Մոլդովան արդեն այդ ճանապարհին են: Լարված է աշխարհաքաղաքական իրադրությունը տարածաշրջանի արևելքում: 2021 թ. սկզբին սկսված ռուս-ուկրաինական պատերազմը դեռ շարունակվում է՝ մարդկային ու նյութական ռեսուրսների վիթխարի կորուստներ պատճառելով երկու կողմերին:

• • •

Ջրաէներգետիկ ռեսուրսների մեծ մասը Դանուբի ավազանում է և Կարպատյան լեռներում: *Անտառային ռեսուրսներով* համեմատաբար լավ են ապահովված տարածաշրջանի հյուսիսի երկրները որոնցում անտառապատ է տարածքի 20–25 %-ը: Բացառությամբ Բելառուսի, անտառային ռեսուրսների շահագործումը սահմանափակ է, քանի որ դրանք ունեն առավելապես ջրապաշտպան, հողապաշտպան նշանակություն և նպաստում են հանգստի ու զբոսաշրջության զարգացմանը: Բելառուսի տարածքում է գտնվում հայտնի «Բելովեժյան թավուտ» արգելոցը, որը նախատեսված է անտառների և հատկապես զուբրի պահպանության համար:

Գյուղատնտեսության զարգացման բնառեսուրսային նախադրյալները բավական բարենպաստ են: Տարածաշրջանի *մակերևույթը* բազմազան է. հյուսիսում գերակշռում են հարթավայրերը, իսկ մնացած շրջաններում՝ լեռները: Ընդարձակ են Միջին Դանուբյան և Ստորին Դանուբյան դաշտավայրերը: *Կլիմայական պայմանները* թույլ են տալիս աճեցնելու բարեխառն, իսկ հարավում նաև մերձարևադարձային գոտու գյուղատնտեսական մշակաբույսեր: Եթե Ուկրաինայի և Բելառուսի միջև ձգվող Պոլեսիեում, ինչպես նաև

Լեհական դաշտավայրում շատ են չորացման կարիք ունեցող ճահճացած հողերը, ապա Ռումինիայում և Բուլղարիայում ոռոգման կարիք է զգացվում:

• • •

Ցածր բնական աճին նպաստել են նաև ուրբանացման մակարդակի բարձրացումը, կանանց ակտիվ ներգրավվածությունը աշխատանքում և այլն: Բնակչության բնական աճն ավելացնելու ուղղությամբ տարվող ժողովրդագրական քաղաքականությունը դեռ ցանկալի արդյունքներ չի տալիս:

• • •

Տարածաշրջանում ազգամիջյան լրջագույն հիմնախնդիրներ կան. պատերազմը Ռուսաստանի և Ուկրաինայի միջև (այդ պատերազմի ընթացքում ավելի քան 6 մլն ուկրաինացիներ և այլ ազգերի ներկայացուցիչներ լքել են Ուկրաինան), տարածքային և ազգամիջյան հիմնախնդիրներ Հունգարիայի և Ռումինիայի, Լեհաստանի և Ուկրաինայի միջև, Բուլղարիայում՝ բուլղարների և թուրքերի միջև, Մոլդովայում՝ մոլդավների և ռուսալեզու բնակչության միջև: Մոլդովան ուզում է միանալ Ռումինիային, իսկ նրա տարածքում ինքնահռչակված Մերձդնեստրյան հանրապետությունը՝ Ռուսաստանին: Մոլդավերենն էլ պաշտոնապես ճանաչել են ռումիներենի առանձին բարբառ: Սրանք էլ պատկանում են ռոմանական լեզվախմբին:

• • •

Արևելյան Եվրոպայի ՏԱԴ-ն և հատկապես ՔԱԴ-ն՝ ***քաղաքաաշխարհագրական դիրքը,***. որակական էական փոփոխությունների են ենթարկվել: Դա պայմանավորված էր այսպես կոչված սոցիալիստական ճամբարի փլուզմամբ, ՏՓԽ-ի (Տնտեսական փոխօգնության խորհուրդ), ՎՊԿ (Վարշավայի պայմանագրի կազմակերպություն) լուծարմամբ, քաղաքատարածքային փոփոխություններով՝ «Բեռլինի պատի» փլուզմամբ և Գերմանիաների միավորմամբ, Չեխոսլովակիայի բաժանմամբ, ԽՍՀՄ-ի փլուզմամբ: Տարածաշրջանով են անցնում միջազգային նշանակության օդային և ցամաքային տարանցիկ ուղիներ, որոնք Եվրոպայի տարածաշրջանները կապում են միմյանց և Հարավարևմտյան Ասիայի ու Միջերկրականի ավազանի երկրներին: Չեխիայի **Պլզեն** քաղաքի մոտ է գտնվում Եվրոպայի երկրաչափական կենտրոնը: Այն «Եվրոպայի կենտրոն» մակագրությամբ կոթող է:

• • •

Արևելյան Եվրոպայի գլխավոր գետերը՝ **Դանուբը**, **Դնեպրը**, **Օդերը**, **Վիսլան** նավարկելի են և լրացնում են տարածաշրջանի ճանապարհային ցանցը: Հսկայական նշանակություն ունի Դանուբը, որով ծովային նավերը Հյուսիսային ծովից հասնում են Սև ծով: Մեծ է Բալթիկ և Սև ծովերի տրանսպորտային նշանակությունը:

Տարածաշրջանն հայտնի է *հանգստի և զբոսաշրջության ռեսուրսների մեծ ներուժով*: Հատկապես առանձնանում են Սև և Ազովի ծովափերը, հանքային ջրերով հայտնի է Չեխիան՝ աշխարհահռչակ **Կարլովի Վարի**, Արևմտյան Ուկրաինան՝ **Տրուսկավեց** առողջարաններով: Կարևոր ռեսուրսներ են նաև լեռնային արոտավայրերը, գեղատեսիլ **Բալատոն լիճը** (Հունգարիա), ազգային պարկերը:

Սակայն վերջին տասնամյակներում *սրվել են շրջակա միջավայրի հիմնախնդիրները*: Բնապահպանական բարդ իրավիճակ է ստեղծվել Վերին Սիլեզիայում, Դոնեցի ավազանում և տարածաշրջանի մետաղաձուլական, քիմիական արդյունաբերության և հանքարդյունահանման կենտրոնների շուրջ: Բնապահպանական աղետ էր Չեռնոբիլի ատոմակայանի վթարը Ուկրաինայում (1986 թ.):

• • •

Հայերն Արևելյան Եվրոպայում հայտնվել են շատ վաղուց: Դեռ միջնադարում այստեղ ստեղծվեցին առաջին հայկական համայնքները, կառուցվեցին եկեղեցիներ, հիմնվեցին տպարաններ, դպրոցներ, հրատարակվեցին գրքեր, թերթեր ու ամսագրեր: Միջնադարում հայկական կազմակերպված համայնքներ են գործել Ուկրաինայի, Ռումինիայի, Լեհաստանի, Հունգարիայի քաղաքներում: Հայերը եղել են հմուտ վաճառականներ և արհեստավորներ, գիտության, մշակույթի գործիչներ: Նրանց մի մասն այսօր էլ պահպանում է իր կապերը Հայաստանի հետ: 2020 թ. տվյալներով Արևելյան Եվրոպայում ապրում էր 280 հզ. հայ:

• • •

Քարտեզի վրա ցու՛յց տվեք Արևելյան Եվրոպա տարածաշրջանի սահմանները, նրա կազմում գտնվող պետությունները իրենց մայրաքաղաքներով:

Արևելյան Եվրոպայի ***տնտեսաաշխարհագրական դիրքն*** (ՏԱԴ) ընդհանուր առմամբ բարենպաստ է: Չորս երկիր անմիջական ելք ունի դեպի Ատլանտյան օվկիանոս և նրա մասը կազմող ծովեր:

• • •

Տարածաշրջանում առանձնանում են հունգարները (ինքնանվանումը՝ **մադյար**), որոնք պատկանում են ուրալյան լեզվաընտանիքի ուգրո-ֆինական լեզվախմբի ուգորական ճյուղին: Քոչվոր հունգարները Միջին դանուբյան դաշտավայր են գաղթել 9-րդ դարում: Որոշ հետազոտողներ նշում են, որ նրանք ապրել են Կամա գետի ավազանում:

Տարածաշրջանում ազգամիջյան լրջագույն հիմնախնդիրներ կան...